16.08.2021

Համայնքի ղեկավարի որոշումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 093383347 noramarg.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 101

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ 16 ՀՈՒԼԻՍԻ ԹԻՎ 85/1 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աճուրդային հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 16-ին կազմված ՝ օգոստոսի 20-ին հայտարարված աճուրդը չկայանալու մասին արձանագրությունը.

Որոշում եմ

Համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 16-ի թիվ 85/1 որոշումը ''Նորամարգ համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 20, հա հողամասի աճուրդ հայտարարելու մասին՞ ճանաչել ուժը կորցրած:

Համայնքի ղեկավար՝ **ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

20 __ թ. _____ ____
գ.Նորամարգ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

2021 թվականի օգոստոսի 20-ին ժամը 11-ին հայտարարված հետևյալ հողամասի՝

ԼՈՏ 1 Գյուղատնտեսական նշանակությամբ այլ հողատեսք,կադաստրային ծածկագիր/03-068-0406-0022/մակերեսը 20 հա,մեկնարկային գինը 2200000 ՀՀ դրամ

Աճուրդը չի կայանալու,քանի որ <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթում հայտարարված(20.07.2021 թիվ132)հայտարարության տեքստը չի համապատասխանում ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 68-րդ հոդվածի 2-րդ մասին,ինչպես նաև <<Հրապարակային սակարկությունների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին:

Աճուրդի կազմակերպիչ՝ Արման Թադևոսյան /համայնքի ղեկավար/

Հանձնաժողովի անդամներ՝

Աճուրդավար՝ Առաքել Ավետիսյան/համայնքի ղեկավարի տեղակալ/

Արձանագրող՝ Մարինե Գրիգորյան/համայնքի ղեկավարի խորհրդական/

Էդուարդ Գալստյան/ավագանու անդամ/

Գագիկ Ավանեսյան/ավագանու անդամ/

16,08,2021թ